Выписка из протокола № 8

заседание кафедры Всемирной истории и зарубежного регионоведения

от 23.06.2023

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
փ.գ.դ., պրոֆեսոր

Պ. Ս. Ավետիսյան

«_____» _____ 2023թ.

ԿԱՐԾԻՔ

Անդրանիկ Ռաֆայելի Առաքելյանի՝ *«Միջարաբական համագործակցության առանցքային հիմնախնդիրները Մերձավոր Արևելքում (1991-2011 թթ.)» պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ՝ տրված Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի կողմից:*

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական Համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի 2023 թ. հունիսի 16-ի նիստում (արձանագրություն թիվ № 8):

Մասնակցում էին՝

Մարգարյան Երվանդ Հրանտի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի վարիչ, Պալամարչուկ Անաստասիա Անդրեյի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մայիյան Արամ Սերգեյի՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Մաիլյան Բենիամին Վիկտորի՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Եվստրատով Անտոն Գենադիի՝ պատմական գիտությունների թեկնածու:

ԱՌ Առաքելյանի գիտական թեզի թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Ռ. Կարապետյան: Աշխատությունը կազմված է ներածությունից (այդ թվում նաև աղբյուրների և գրականության համառոտ տեսություն), չորս գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար բաղկացած է ենթագլուխներից), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ա. Ռ. Առաքելյանի ուսումնասիրության օբյեկտը, որպես այդպիսին՝ միջարաբական համագործակցության առանցքային հիմնախնդիրներն են, իսկ առարկան՝ Մերձավոր Արևելքում քաղաքական, դիվանագիտական և ռազմական զարգացումները, մասնավորապես՝ 1991-2011 թթ. իրադարձությունների համապատկերում, որոնք պայմանավորված են եղել բազմապիսի գործոններով: Դրանց ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն միջարաբական հարաբերությունների տեսանկյունից, այլև Մերձավոր Արևելքում տարածաշրջանային զարգացումները հասկանալու համար: Դա, առանձնապես, կարևոր է Պաղեստինի հիմնախնդրի նկատմամբ դրսևորումների հարցում, Իսրայելի գործոնն և դրա ազդեցության աստիճանը արաբական երկրների արտաքին քաղաքականության ոլորտում և այլն:

Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն զարգացրել է իր հարաբերություններն արաբական երկրների հետ և մշտապես իր համերաշխությունը հայտնել մերձավորարևելյան խաղաղ գործընթացում արաբական դիրքորոշմանը: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը մեծ կարևորություն է տալիս արաբական երկրների հետ հարաբերություններին և այս համատեքստում նման գիտական հետազոտությունը կարևոր նշանակություն ունի Մերձավոր Արևելքի պատմության և քաղաքականության արդի փուլի վերաբերյալ գիտելիքների ընդլայնման համար:

Միջարաբական փոխհարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրումն իր ուրույն նշանակությունը կարող է ունենալ նաև արտաքին քաղաքականության ոլորտում մեր պետության համապատասխան ատյանների կողմից հայեցակարգային սկզբունքների մշակման գործում: Այդ չափազանց օգտակար և ուսանելի փորձն անտարակույս պետք լիներ համապարփակ ուսումնասիրության առարկա: Ուստի ընտրված թեման խիստ հրատապ և արդիական է, ունի գործնական-քաղաքական, գիտատեսական նշանակություն:

Հեղինակին հիմնականում հաջողվել է վեր հանել թեման և ներկայացնել այն պահանջված գիտական մակարդակով: Աշխատության կառուցվածքը բավականաչափ հղկված է, ատենախոսը մեծ մասամբ կարողացել է խուսափել կրկնություններից ու մանրամասնությունների կուտակումներից: Շարադրանքն ընդհանուր առմամբ համոզիչ է և տրամաբանական: Անվիճելի առավելություններից է աշխատության արդի գիտական չափանիշներին համապատասխանող տերմինաբանական ապարատը: Ատենախոսի կողմից ընտրված համապարփակ թեման, նրա հետ կապված վայրիվերումները և բազմակուտակ խնդիրները արծարծվում են այս կամ այն աշխատություններում, որոնք և անդրադառնում են նրա առանձին կողմերին: Հետևաբար, առանձնակի դրվատանքի է արժանի աշխատության աղբյուրագիտական հենքը՝ փաստաթղթեր և ժողովածուներ, մենագրություններ և հոդվածներ տարբեր լեզուներով: Աշխատանքը բնորոշվում է փաստագրական, մասնավորապես, ռազմական, տնտեսական, պատմական նյութի մշակմամբ, ինչպես նաև վիճակագրական տվյալների առկայությամբ:

Հեղինակը հիմնականում տիրապետում է նյութին, կարողացել է ազատ ու անկաշկանդ շարադրել իր դրույթներն ու եզրակացությունները: Աշխատության կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ ատենախոսը փորձել է բազմակողմանի ներկայացնել հայրենի արևելագիտության համար կարևոր և հետաքրքիր սույն թեման:

Դրվատանքի է արժանի աշխատանքի կուռ կառուցվածքը: Ներածական մասում դիտարկվում են հայրենի և օտարազգի հետազոտողների, գիտնականների ու քաղաքագետների աշխատանքները առհասարակ միջարաբական հակասական հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից: Դա հնարավորություն է տալիս բացահայտելու առավել պակաս հետազոտված թեմաներ:

Ուստի, հեղինակը անդրադարձել է արաբական աշխարհի փոխհարաբերությունների կարևորությանը նրա հարևան Իսրայելի հետ, որոնք վճռորոշ նշանակություն ունեն Մերձավոր Արևելքի երկրների տնտեսության և քաղաքականության համար (հատկապես անվտանգության ոլորտում): Հետաքրքիր է Իրաքի և արաբական այլ երկրների միջև սրման թեման, ինչը պայմանավորված էր Սիրիա-Եգիպտոս-Սաուդյան Արաբիա առանցքի ձևավորմամբ և, հատկապես, ԱՄՆ-ի հետ դրանց փոխգործակցության գործոնով:

Ի պատիվ Անդրանիկ Առաքելյանի նշենք, որ իր հետազոտական աշխատության մեջ նրան հաջողվել է ոչ միայն ճիշտ ընկալել արաբական երկրների դիվանագիտության շահերի բազմազան և հաճախ հակասական դրդապատճառները, այլև դրանք հավուր պատշաճի ներկայացնել ու մեկնաբանել: Ատենախոսությունն ունի արդիական հնչեղություն և հրատապություն, որը պայմանավորված է աշխատանքի ինչպես գիտական, այնպես էլ գործնական, կիրառական որոշակի նշանակությամբ:

Բարձր գնահատելով Ա. Առաքելյանի աշխատանքը, նշենք նաև, որ այն զերծ չէ որոշ անճշտություններից և բացթողումներից: Մեր կարծիքով ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակն օգտվեր նաև մի շարք հեղինակների արժեքավոր ուսումնասիրություններից.

1. Азимов К., Что было до вторжения США в Ирак (Ирак и арабский мир накануне американской операции) // Россия и мусульманский мир. 2003. № 8. С. 91- 97.
2. Дунае В., Сирия боится оказаться в кольце американских союзников // Россия и мусульманский мир. 2003. № 6. С. 141-143.
3. Ктиторова Е. М., Ливано-израильская война 2006 г. Ее истоки и последствия // Вестник РГГУ. Серия: Политология. История. Международные отношения. 2009. № 13. С. 152-161.
4. Савичева Е. М., Роль и место «Хизбаллы» в ливанском треке ближневосточного урегулирования // Magistra Vitae: электронный журнал по историческим наукам и археологии. 2010. № 18. С. 152-162.
5. Ատենախոսության մեջ հեղինակը չի տալիս որոշ քաղաքական գործիչների լրիվ անուն-ազգանունները՝ Շամիր, Բեյքեր և այլք (տե՛ս էջեր 29, 30, 104 և այլն: Իսկ էջ 34-ում գրված չէ Գերմանիայի Արտաքին գործերի նախարարի անուն-ազգանունն ընդհանրապես): Ընդ որում նկատելի է, որ հեղինակը ոչ լրիվ տալիս է արևմտյան և իսրայելական քաղաքական գործիչների անունները, մինչդեռ արաբական գործիչներինը տալիս է լրիվ: Սա արդեն նման է քաղաքական խտրական դիրքորոշման, ինչը գիտական ոլորտում անընդունելի է:
6. 75-րդ էջում հեղինակը գրում է, որ «Սիրիան Սաուդյան Արաբիային արևմտյան ազդեցության գոտի, սակայն Ծոցի պատերազմից հետո այդ կարծրատիպը կոտրվեց»: Նա, սակայն, չի բերում որևէ փաստարկ իր այդ թեզը հիմնավորելու համար, առավել ևս որ այդ պատերազմի ժամանակ Սաուդյան Արաբիան ոչ միայն տրամադրեց իր տարածքը դեպի Իրաք ներխուժման համար, այլև նրա զորքերն էլ էին մասնակցում այդ ներխուժմանը: Մեր կարծիքով Հաֆեզ Ասադը ԽՍՀՄ-ի թուլացման պայմաններում

փորձում էր բարելավվել իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, և որպես միջնորդ հանդիսանում էր Սաուդյան Արաբիան:

Հանդիպում են նաև թերություններ, որոնք ըստ էության կրում են տեխնիկական բնույթ.

1. էջ 19-ում ներկայացված 1956 թ. Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ներխուժումը Սուեզի ջրանցք գրված է 20-րդ էջում ներկայացված 1955 թ. Բաղդադի պակտից առաջ: Այնինչ ժամանակագրորեն ճիշտ կլիներ ներկայացնել այն հետո:
2. էջ 58-ում գրված չէ 2006 թ. Լիբանանում իսրայելական ռազմագործողության անվանումը՝ «Ձուլածո կապար»:
3. էջ 112-ի վերջին տողում պետք է գրել ոչ թե «Ռուսաստան», այլ «ԽՍՀՄ», քանի որ 1990 թվականին Խորհրդային Միությունը դեռ չէր կործանվել:
4. Եզրակացության մեջ 6 և 9 կետերի բովանդակությունը ընդհանուր առմամբ համընկնում է:

Այնուհանդերձ, նշված դիտողությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժեքը:

Ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացնող պահանջներին: Այն գրված է պատշաճ գիտական մակարդակով: Ամբողջությամբ վերցված ատենախոսությունը հաջողված հետազոտություն է: Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի կողմից սեղմագրի վերջում ներկայացված հոդվածներում:

Անդրանիկ Ռաֆայելի Առաքելյանի՝ «Միջարաբական համագործակցության առանցքային հիմնախնդիրները Մերձավոր Արևելքում (1991-2011 թթ.)» պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ելնելով վերոհիշյալից Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնը միջնորդում է գիտական աստիճաններ շնորհող ԲՈԿ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդին Անդրանիկ Ռաֆայելի Առաքելյանին շնորհել իր հայցած գիտական աստիճանը:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսկական (Սլավոնական) Համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի 2023 թ. հունիսի 16-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ__):

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի նիստում, գրառում N__, հունիսի 16-ին, 2023 թ. (արձանագրություն թիվ __):

Ատենախոսության քննարկմանը մասնակցել են պ.գ.դ., պրոֆեսոր Ե.Հ. Մարգարյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Պալամարչուկը, պ.գ.թ., դոցենտ Ա. Ս. Սայիյանը, պ.գ.թ., դոցենտ Բ.Վ. Մաիլյանը և պ.գ.թ., դասախոս Ա.Գ. Եվստրատովը:

Պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության ամբիոնի վարիչ՝

Ե. Հ. Մարգարյան

Հայ-Ռուսական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Ա. Ա. Պալամարչուկ

Հայ-Ռուսականհամալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ա. Ս. Սայիյան

Հայ-Ռուսական համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ Արևլագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Բ. Վ. Մաիլյան

Հայ-Ռուսական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու՝

Ա. Գ. Եվստրատով

Հայ-Ռուսական համալսարանի Գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու՝

Ռ.Ս. Կասաբաբովա